

Հանգուցեալի յիշատակն և մաղթում Արարչին ուղարկել  
միսիթարիչ ու Հոգին՝ ձեզ հասած վիշտը սփոփելու:

Հանգուցեալ Արդար Յովհաննիսեանի յուղարկաւո-  
րութեանը ներկայ գտնուելու համար Թիֆլիզ ուղարկուեց  
Երեանի թեմական գպրանոցի տեսուչ Տ. Գարեգին վար-  
դապետը, որպէս նոյն գպրանոցի ներկայացուցիչ:



## ՆԵՐՍԻԾ ՀԻՆԴԵՐՈՐԴ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ

7. Ներսիսի գործունեութիւնը Օծումից յևտ: ա. Կա-  
թուղիկոսը Թիֆլիզում ներսէսը իւր գործունէու-  
թեան լաւագոյն տարիներն անցրել էր Թիֆլիզում: այդ-  
տեղ նա մաքառումներ էր ունեցել և փայլուն յաջողու-  
թիւններ ձեռք բերել այգտեղ էր նրա ստեղծած և փայ-  
փայած աղգային եկեղեցական մեծ հաստատութիւնը,  
ներսիսեան հոգեօր գպրանոցը, որը նա իւր կոնդակնե-  
րից մէկում ուղղած Մկրտիչ էմինին, մինչեւ ան-  
գամ համալսարան է կրչում: Քանի ներսէսը Քիշինեաւմն  
էր, Թիֆլիզում միմիանց յաջորդել էին մի քանի առաջ-  
նորդներ, վերջինը Ախալցխայի կարապետ եպիսկոպոսն էր:  
ներսէսը հէնց որ կաթուղիկոս օծուեց և վաճքի ընթացիկ  
գործերը փոքր ինչ կարգի բերեց, լրացրեց Մինօդի ան-  
դամների թիւը, Դուկաս եպիսկոպոսին կարգեց իրան տե-  
ղապահ և ինքը վերադարձու Թիֆլիզ:

Ծերացած և յօդնած ժամանակ եկեղեցական ծայ-  
րագոյն իշխանութիւն ձեռք բերած կաթուղիկոսն այլիս  
անկարող էր աչքի ընկնազ մեծ ծրագիրներ ունենալ: Եւ  
հէնց այն հանգամանքը, որ ամենից երկար Թիֆլիզումն  
էր մնում, ցոյց է տալիս, որ նրա ցանկութեան և գոր-  
ծունէութեան ծրագիրը կայանում էր նրանում՝ շայունա-  
կել իւր առաջնորդութեան օրով սկսուած գործերը, և

որքան երեսւմ է պահուած թղթերից, այդտեղ էլ գլխաւոր ուշը դարձրել էր Կարապետ եպիսկոպոսի գործերի քննութեան վրայ, որին յետոյ հեռացրեց թեմից և հաստատել տուեց Սինօդի անդամ (№№ 68, 182, 188, 202, 203, 257, 424, 520, 549, 566): Հետաքրքիրն այն է, որ նա պաշտօնից հեռացրած առաջնորդի հետ շատ մեղմ է վարւում, իւր լաւագոյն ճանաչած վարդապետներից մէկին՝ Մակարին (կաթուղիկոս) ուղարկում է Ախալցխա նրան ընդառաջ, բայց Կարապետը չի գալիս և Ախալցխայումն էլ վախճանեւում է:

բ. Կաթուղիկոսի շինութիւնները. Էջմիածնի վահքում նրա թողած մնայուն գործերն են Ներսիսեան լիճը, անտառը և գոմանոցը, որոց վրայ անմիջական հակող և գործը կարգադրողն իսկապէս Դուկաս արքեպիսկոպոսն էր: Ներսէսն այդ բանի համար Թիֆլիզից շատ կոնդակ ներ է ուղարկել Դուկասին, (№№ 62, 216, 237, 313, 387, 422, 530, 613, 614): Լճի շինութիւնը սկսուել է 1846 թ. Մայիսի 27-ին, երբ առաջին անդամ կոնդակ էր տրուել Սինօդին և պատուիրել վերակացու կարգել լինելիք աշխատանքների վրայ, իսկ վերջացել է 1848 թ. Նոյեմբերին: Այդ երեսւմ է Յովհաննէս և Խաչատուր Լազարեաններին գրած կոնդակից, որի մէջ ի միջի այլոց յիշում է «աւարտեալ վերջին աւելըն նոյեմբերի զգումն և զինակնու»:

գ. Կաթուղիկոսի վերաբերմունքը դէպի էջմիածնի միաբանութիւնը: Ընդհանուր սարածուած կարծիք է, որ Ներսէսը ուսումնաէր և լաւ պատրաստուած հոգևորականներին ոչ միայն չի սիրել, այլ մինչեւ անդամ հալածել է: Սակայն որքան կարողացանք կոնդակներից մակարերել, պէտք է ասենք, որ այդ կարծիքն ուղիղ չէ: Նրա օրով էջմիածնի միարանութիւնը թէ թուի և թէ անդամների կրթական պակասութեան կողմից խօկապէս խեղճ վիճակ ունէր: Դարձեալ Յովհաննէս և Խաչատուր Լազարեաններին գրած մի կոնդակում փայլուն կերպով նկարագրուած է այդ խեղճ և ցաւալի դրութիւնը: Նկարագրութիւնից երեսւմ է, որ 1849 թ. սկզբում

Էջմիածնում կային «Եպիսկոպոսունք Հինգ, վարդապետք թուով 24, յուոց պիտանացուք իբրև վեց և ի նոցունց երեք միայն յուսալիք, երկու սարկաւագունք, հինգ ու բարակիրք... և 38 աշակերտք»։ Մինչդեռ Վրաստանի և Խմերեթի, Աստրախանի, Շամախու և Ասպահանի թեմերը դատարկ էին, մինչդեռ Պօլսոյ պատրիարքը հրաժարեւում էր և գժուարութիւննոր էր յարսցանում ընդունել էջմիածնի նույրակներին և որ գլխաւորն է՝ Պօլսում թոյլ չէր տալիս էջմիածնի առանձին գործակալի ներկայութիւնը, կամենալով իւր անձի մէջ պարունակել այդ պաշտօնը։

Հինգ Եպիսկոպոսներից արժանաւոր է համարում Պուկասին, որին ծանրաբեռնել էր Սինօդի և վանքի գործերով և Յովհաննէս եպիսկոպոս Շահիսթոնեանին, որին կարգել էր Սինօդի անդամ (№ 69), մատենադարանապետ, (№ 431) և էջմիածնի գպրոցի կառավարիչ (№ 174). Աւելորդ չեմ համարում յիշել, որ Շահիսթոնեանը իբրև մատենադարապետ կոնդակով (№ 431) պատուէր է ստունում՝ ամեն կերպ օգնել ակագիմիկ նրանէին, որ 1848 թ. Յունվարին Պետերբուրգից եկել էր Հայաստան և Վրաստան՝ ուսումնակիրութիւններ կատարելու, նաև էջմիածնի մատենադարանի հետ ծահօթանալու նոյն եպիսկոպոսին գրած մի կոնդակում փայլում է ներսիսի լուսամխտ հայացքը մանկանց կրթութեան խնդրում։ Շամսարեանը՝ իբրև գպրոցի կառավարիչ՝ հրաման է ընդունում, «զիվալախայն և զվարոցն դնել ի վառարանս», դաստիարակութեան մեթոդից ընդմիշտ հանել ծեծը, ֆիզիքական պատիժը և տղթել միայն աշակերտի հոգու վրայ։ Չնայած որ Յովհաննէս եպիսկոպոսը պաշտօններով այսքան ծանրաբեռնուած էր, ներսէոր ստիպուած էր ուրիշ յարմար անձ չունենալու պատճառով առ ժամանակ հեռացնել նրան գործերից և ուզարկել Պօլս՝ իբրև իւր ներկայացուցիչ, որ կարգաւորի վերոյիշեալ երկու խնդիրը։ Յայց Շահիսթոնեանը անակընկալ վախճանուած է և ներսէոր յարմար մարդ չի գտնում նրան փոխարինելու այդ տեսակ պատասխանատու յանձնարարութեան համար։

Վեց դործի ընդունակ վարդապետների անունները չեն տուել. նրեք լաւագոյն համարուածը, ուշքան կարելի է մակաբերել կաթուղիկոսի նոցա տուած զանազան յանձնաբարութիւններից, եղել են Սարդիս վարդապետ Հասան-Ջալալեանը, Կարապետ վարդապետ Շահնազարեանը և Մակար վարդապետը, վերջը կաթուղիկոս Սոցանից Շահնազարեան վարդապետին նա կարդում է Թիֆլիզի կոնսիստորիայի նախանդամ և տեղական քննական և այլ կարեսը խնդիրները նորա ձեռքով է հոգում (№ 262), Սարդիս վարդապետին նշանակում է շրջիկ քարոզիչ Պորուայինի ճականի (№ 263), Ախոլցիս է ուղարկում Զմիւռնիայի հրկիղեալ հայերի համար նպաստ ժողովելու (№№ 391, 392), յանձնում է նորան քննական կարեսը դործեր (№№ 434, 568). Իսկ Մակարին էլ իրրե աչքի ընկնող վարդապետի, Էջմիածնից հրաւիրակ է ուղարկում Կարապետ եպիսկոպոսի մօտ (№ 533). Մակարը այդ յանձնաբարութիւնը յաջողութեամբ չի կատարել կամ չի կամեցել կատարելու ներսէոը Նուկաս եպիսկոպոսին դրած թղթի մէջ այդ առթիւ իւր գժգոհութիւնն է յայտնում, որ Մակարը գնացել է Ախոլցիս փոխանակ Կարապետ եպիսկոպոսին համոզելու, որ նա դայ էջմիածին, այնտեղ նորա հետ միացել է և կաթուղիկոսի դէմ դաւեր է սարքում Այդ հանդամանքը չի արդելում, որ ներսէոը նրան թէ Սինոդի անդամ է կարգում և թէ կարեսը յանձնաբարութիւն անում. նրան է ուղարկում, որ դնայ և Ս. Ստեփաննոս վանքի նշանաւոր ձեռագրերը բերի էջմիածին (№№ 619—621):

Պ. Կաթուղիկոսի կարդապութիւններն ընթացիկ գործերի վերաբերեալ ժողովածուի մէջ ժամանակուայ մտնաւոր հարցերով պարապողների համար հետաքրքիր տեղեկութիւններ շատ շատ են. ներսիսի յայտնի գործունէութեան բնորոշ կողմերից մէկն էլ այն էր, որ նա սիրում էր նամակագրութիւններով, փորրիկ ընծաներ տալով օր. նա նիրազի դինի կամ Պարսկաստանի գորդեր է ուղարկում իւր Պետերբուրգի բարեկամ-

ներին, բեռներով դութմայ տանել տալիս Թիֆլիզ' — սերտ յարաբերաթիւն պահպանել բարձրաստիճան պաշտօնեաների, դիրք ունեցող հայերի հետ և իւր ուշադրութեամբ դէպի այդ անձինքը միշտ հնարաւորութիւն ունէր հայ եկեղեցու և նրա վարչութեան մասին ուղիզ հայացք կաղմել տալու (< №№ 96, 98, 318, 460>), Այդ կողմից շատ հետաքրքրական է նրա մի ընդարձակ և գեղեցիկ ոճով դրուած կոնդակը (< № 449) ուղղուած Յ. և Խ. Լազարեան ներին: Սաքա միջնորդել էին, որ ներսէսը լանջախաչ պարզեի և, նախիջեանից Ա. Պետերբուրգ փօխագրուած Դրիգոր քահանայ Տէր-Դրիգորեանին: Կաթուղիկոսն այդ առթիւ Լազարեաններին դրում է, Պետերբուրդի եկեղեցում ծառայող քահանան խաչ ունենալու իրաւունք և արժունիք ունեցող մէկը պէտք է լինի. Դրիգոր քահանային նա անձամբ ճանաչում է, նու մայրաքաղաքի եկեղեցում ծառայելու արժանիք անձ չէ. Ճնայտծ դրան ինքը յարդում է Լազարեանների խնդիրքը և Տէր Դրիգորին խաչ է ուղարկում, միայն այն պայմանաւ, որ նա կրի այդ խաչը քանի որ կծառայի Պետերբուրդի եկեղեցում, հետանալուն պէս պէտք է եկեղեցուն թողնի: Այդ խնդրակատարութեանը իցում է իւր խնդիրը, իշխանները հայ եկեղեցու շահերին նախանձախնդիր են, իրենց բազմաթիւ գործերով ու պացուցել են, բայց հեռու լինելով հայկական կենդրոնից, շատ անդամ հնար չունին ծանօթանալու այլ և այլ անձանց և գործերի խկական պատկերին և սխալում են, լսելով քաղցրախօս և նենդամիտ անձանց: Յատկապէս խնդրում է, թող նոքա շրջահայեաց լինին, տեղեկութիւններ հաւաքեն և քննեն ամենից առաւել իր՝ հայոց ազգի կաթուղիկոսի և ապա եկեղեցական ասպարիզում գործող անձանց գործերը և իրենց բարեսրտութեամբ՝ անձամբ կամ միջնորդութեամբ չօգնեն անարժաններին ի վնաս ընդհանուր շահերի: Իւր ընդհանուր դատողութիւնը ներսէսը լուսաբանում է Սալահթեանի և Աերովրէ եպիսկոպոսների օրինակներով, որոնց համար Լազարեանները միջնորդել են:

Այսպէս առաջ դնալով յիշառակութեան արժանի ենք համարում Սևանի վանքի (№№ 77, 94, 158, 254) գործերի քննութիւնը, վանքի ունեցածների և մանաւանդ ձեռագրերի ցուցակագրութեան մասին կարգագրութիւնը, նոր Զուղոյու տպագիր գորքերի և ձեռագրերի ցուցակագրութիւնը, որոնցից հները և կարևորագոյնները պատռուիրում է ուղարկել Էջմիածին ի տես և ի քննութիւն (№№ 47, 114, 158), Տաթեի վանքի համար ինվենտար կազմելը (№№ 132, 134, 227) և Ս. Սոեփաննոս վանքի բազմաթիւ կարեռը ձեռագրերի Էջմիածնի մատենագարան բերելու կարգագրութիւնը (№№ 619, 620, 621): Սոցա շարքին կարող ենք համարել տպարանի մասին եղած անօրէնութիւնը, որին կից Ներսէսը կամենում էր նաև Ախուրյացիա բանալ (№№ 110, 354, 482). Գրքերի տպագրութեան համար Կովկասի քաղաքական վարչութեան միջամտութիւնը (№ 426) «յաղագս արգելման տպագրութեան գրեանց առանց նախայայնութեան նորուն Պայծառութեան կնեաղ Միխայիլ Սիմօնիչ Վոռօնցովի»: Ներսիսեան և Երեանի սեմինարիաների ներքին գործերի մասին արած մի քանի կարգագրութիւնները (№№ 69, 131, 253, 323, 536, 580, 583):

Վանքի տնտեսութեան բարեզման համար Ներսիսի կարգագրութիւններից, բացի լճի, անտառի և գոմի մասին արածները, տեսնում ենք որ նա մտածում է Դալմայի տուն հանել և ջուր հասցնել Էջմիածին (№ 112), Դոփից խաղողի մատներ է բերել տալիս (№ 618) և շերամապահութեան համար թթենիներ տնկել տալիս (№ 568): Վանքում վերացնում է Դարբաս կոչուած տուրքը (№ 140) և պատուիրում ուխտաւորից միայն կամաւոր տուրք ստանալ:

Նրա վարչական կարգագրութիւններից վանքի մէջ և գուրսը յիշուելու արժանի են. Նա զինուում է կաշառակերութեան դէմ, երբ գործակալութիւն ստանալու համար կաշառք են տալիս (№ 107) և մանաւանդ երբ Երուսաղէմի մի վարգապետ գալիս, եպիսկոպոս է ձեռնադրւում և առանց կաթուղիկոսի գիտութեան 3000 զուռուշ նուէր

անունով կաշառք տալիս էջմիածնի գանձարանին։ Այդառնիւ խօսք ու դրայց է բացւում, բամբասանքը համեստմ է կաթուղիկոսին և նա պատուիրում է գումարը վերադարձանել տիրոջը։ Միենոյն կոնդակում պատմում է հետեւեալ հետաքրքիր գետքը։ — Խարբերդի մօտ Սաղսորայ վանքում Դուկաս կաթուղիկոսի ժամանակ ապրում էր Յարութիւն եպիսկոպոսը, որը կաշառք առնելով, ամեն մի իրեն դիմոզի առանց քննելու ձեռնադրում էր վարդապետ կամ քահանայ։ Եւդոկիայից և Խարբերդից գանդատներ են ուղարկում կաթուղիկոսին և սա կանչում է եպիսկոպոսին քըննութեան։ Եպիսկոպոսը հրաժարում է կաթուղիկոսին ներկայանալու և ասում է, երբ ես գնացի էջմիածնի ձեռնադրուելու, ինձ չհարցըին թէ ունիս արժանաւորութիւն, այլ ռանիս դրամ և ես ասացի թէ ունիմ և ձեռնադրեցին, նոյնն էլ ես եմ անում», (№№ 523, 524)։

Բացի այս գետքերից, կաթուղիկոսը տեղեկացել էր Յակոբ վարժապետ Կարինեանցի կաշառակերութիւնը և լիստ քննութիւն էր նշանակել (№ 280)։

Հաս ու չհասի և ամուսնական խնդիրները կաթուղիկոսի կոնդակներում շատ սակաւ են, ընդամենը վեց անգամ են շօշափում (№№ 72, 106, 168, 428, 440)։ Մի երկու կոնդակ էլ նուիրուած են քահանաների կրկնամուսնութեան հարցին (№№ 171, 172), մի հարց, որը մինչեւ այսօր էլ վախճանական վճռի չէ եկել և որը շարունակ յարուցւում է։

Էջմիածնի գանձարանի պատմութեան համար նիւթեն տալիս մի շարք կոնդակներ (№№ 176, 178, 189, 196, 365). Երեանից կոնսիստորիան էջմիածնի փոխադրելու խնդիրներ շօշափում են ուրիշ կոնդակներ (№№ 116, 136, 121)։ Կալուածական հարցերը շատ են հետաքրքրել ներսին (№№ 79—81, 84—86, 225, 224, 406, 476)։

Երեք հատոր կոնդակների ժողովածուի առաջին և երկրորդի սկիզբը պարունակում են պատմագետի համար այսքան բազմատեսակ խնդիրներ։ Կոնդակների մէջ անշուշտ կան այնպիսիներն էլ, որոնք միանգամայն մասնաւոր քնա-

ւորովթիւն են կրում և ժաղսվածուի հրատարակիչը կարող է տարակուածել, արդեօք հարկաւոր էլ կ'լինի այնպիսիներն էլ հրատարակել։ Մի բան հարկաւոր է առանձին կերպով շեշտել, ներսիսի կոնդակները՝ ամենաաննշաններն էլ իր գրածներն են, նա կոնդակագիր չէ ունեցել, ինըը սեը գրել և շատ անդամ էլ ինքն է արտագրել՝ գրագրի պաշտօն կատարելով։ Մի կոնդակի մէջ (№ 498) նա գանդաւում է էջմիածնի աղքատութեան, վարդապետների տղիտութեան և Սինօդի անզօրութեան մասին, ասելով, մինչ ամենայն Հայոց կաթողիկոսը ստիպուած է գրագրի պաշտօնն անդամ վարել, Սինօդի անդամները ոչ մէայն իրանք թղթերը չեն դրում, զլանում էլ են կարդալ առենադպրի գրածը և ստորագրում են կարեւոր թերթերն առանց կարդալու։ Այսուղից պարզ է, որ ով գործ ունենայ ներսիսի թղթերի հետ, համազուած պիտի լինի, որ ամենաաննշան թղթի իւրաքանչիւր տողը ներսիսի գրչի մոքի արտագրութիւնն է։

#### Մհերով վարդապետ



## Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Փ

Աղքամարի թեմը. Այս ընդարձակ կաթուղիկոսական թեմի կրթական խիստ ողբարի գըութեան ցաւալի հետեւանքներից մէկը մատնանշող հետեւեալ դրութիւնն ենք կարդում «Յուր հանդակի» մէջ։

Ամենայ ամերելեան միսիոնարներու որբանոցին ընթացաւարտ եղող աղաք իրենց դիւզերը վերագառնալով, ոմանք քարոզութիւն և ոմանք ուսուցչութիւն կընեն և անհամացնութեան առելթ կըլլան բաղաքականամիտ գաղափարներով։ Այս աղաք իրենց ամսականներուն դիմաւոր մասը կը ստանան միսիոնարներէն և տեղ տեղ ալ զիւզացիներուն առւած հացահատիկներով կը բաւականանան։ Աղթամարայ կաթուղիկոսական